ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 Ն.
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/2210/02/24 ք. Երևան
1 Ապրիլի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ դատարան), նախագահությամբ դատավոր Արամ Մկրտչյանի, ծանոթանալով «ԻՆՏԵԼԻԶԵՆԹ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊ ընկերության հայցադիմումի ընդդեմ ՀՀ Ներքին գործերի նախարարության՝ Պատասխանողի գործողությունները՝ Հանձնաժողովի կողմից Հայցվորի հայտի մերժումը և Հայցվորին մրցույթի հետագա մասնակցությունից զրկումը ինչպես նաև Գաղտնիության ռեժիմի ապահովման բաժնի կողմից դրսևորված անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու, և որպես հետևանք՝ ՀՀ ՆԳՆ ՓՆՄԱՊՁԲ-07/2024/ՃՈ ծածկագրով ընթացակարգը՝ մինչև Հայցվորին Թույլտվություն տրամադրելու հարցի լուծումը, կասեցնելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

Հայցադիմումը ներկայացվել և դատավոր Ա.Մկրտչյանին մակագրվել և աշխատակազմին է հանձնվել 27.03.2024թ.:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122 հոդվածների պահանջներին համապատասխան:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր չկան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված

որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:
Նույն օրենսգրքի 234.6 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:
Նույն օրենսգրքի 234.8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք և նրանց ներկայացուցիչները դատական նիստի ժամանակի և վայրի, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում առանձին դատավարական գործողություններ կատարելու մասին ծանուցվում են էլեկտրոնային հաղորդակցության միջոցով ծանուցագրերը և այլ փաստաթղթեր սույն օրենսգրքի 97-րդ հոդվածով սահմանված կարգով հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստին ուղարկելու եղանակով:
Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 234.5-րդ, 234.6-րդ, 234.8-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

Հայցադիմումն ընդունել վարույթ:

Եզրափակիչ դատական ակտի հրապարկման օր սահմանել 2024թ. մայիսի 13-ը:
Կողմերի ծանուցումն իրականացնել էլեկտրոնային հաղորդակցության միջոցով՝ հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեներին ուղարկելու եղանակով:
Պատասխանող ՀՀ ներքին գործերի նախարարությունից պահանջել որոշումն ստանալու օրվանից հնգօրյա ժամկետում Դատարանին ներկայացնել ՀՀ ՆԳՆ ՓՆՄԱՊՁԲ-07/2024/ՃՈ ծածկագրով գնման ընթացակարգի՝ իր տիրապետության ներքո բոլոր ապացույցները:
Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Արամ Մկրտչյան

Signed by: ARAM MKRTCHYAN 1712720074
Date: Mon, 01 Apr 2024 17:41:39 GMT+04:00

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am